Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Дрілер Ф.

[Рукописний покажчик — [illegible]]:

1ten
1580

1999

[illegible]

Թ.

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ.

ԴԱՎԻԹ

Լեռ
1580

ՕՏԱՐ ՓՈՒՆԶԵՐ

Ա. ՀԻՒՍՔ

ՇԻԼԼԷՐԻՑ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԳԵՐՄԱՆԵՐԷՆԻՑ

ՄԵՍՐՈՊ Վ. Մ. ՄԱՔՍՈՒԴԵԱՆՑ

Թեմ. տպարան Հայոց Ատրպատականի
ՅԻՇԱՏԱԿ ՎԱՂԱՄԵՌ ԵՂԻՍԱԲԵԹԻ ՄԻՐՋԱԲԼԳԵԱՆՑ
ԴԱՎՐԷԺ
1904

1687

41580-60

38

ՄԱՅՐԻՍ

Անոյշ կարիդ, քաղցր ժպտիդ,
Արտասուքներիդ դառնագին՝
Ի փոխարէն ճէմ որդեկիդ
Նուէրս այս է, Մա՛յր անգին:

Չնչի՞ն նուէր, բայց ի՞նչ արած,
Չունիմ ո՛չինչ աւելի,
Որով սփոփեմ սիրտդ ցաւած,
Պակեմ սէրդ մայրենի:

ՈՐԴԻԴ
Մ.Վ.

1904 Մարտ 17
ԴԱՎԻԹ

ԻԲԻԿՈՍԻ ԿՌՈՒՆԿՆԵՐԸ.
(Die Kraniche des Ibykus)

Դից համակրելին երգիչն Իբիկոս
Ուղղից քայլերը դէպի Կորնթոս,
Ուր կար կառքերի և երգի մրցում,
Որ յոյն ցեղերին էր միացնում,
Ունէր նա շնորհ երգելու քաղցրիկ
Պարգև ստացած մեծն Ապոլոնից.
Այսպէս դուրս ելաւ երկրից իր բնիկ,
Ձեռին թեթև ցուպ, սիրտն եռանդալից։

Բարձրացել էր նա սարի կողն արդէն,
Ակրոկորնթոսն երբ տեսաւ իր դէմ,
Եւ Պոսիդոնի եղևնեացն անտառ
Մտաւ երկիւղած սրտով դողահար։
Լուռ էր չորս կողմը, յոկ կռունկների
Երամներն էին ուղեկցում նրան,
Որ քաշուում էին դէպի հարաւի
Տաք աշխարհները խմբով անբաժան։

—Ողջո՜յն ձեզ, ողջո՜յն, սիրուն երամներ,
Որ մինչև ծովը եղաք ինձ ընկեր.
Ձեզ բարի նշան կ'ընդունիմ ես ինձ,
Մինչ իմ վիճակն էլ տարբեր չէ ձերից.
Հեռուից ենք գալիս թէ դուք և թէ ես
Եւ կարօտում ենք հիւրասէր յարկի.
Ո՜ւր է մեզ գթաբ վանատուրը Ձեզ,
Որ պաշտպանողն է ամէն օտարի։

Եւ ուրախ զուարթ առաջ է գնում,
Բայց երբ անտառի խորերն է հասնում,
Նեղ արահետին երկու մարդասպան
Ճանապարհն յանկարծ կտրում են նրան.
Ստիպուում է նա պատրաստուել կռուի,
Բայց դողում է ձեռն ահից թուլացած.
Քնքոյշ լարերն է բռնում քնարի,
Դրանց վրայ էլ թափ չէր մնացած։

Ձայն է արձակում դից և մարդկերանց,
Չի գտնում սակայն փրկարար մի անձ.
Որքան էլ հեռու հնչում է իր ձայն,
Չկայ, չի տեսնում հետք կենդանութեան։

Ա՜խ, մեռնո՜ւմ եմ ես, հեծումէ տրտում,
Օտար հողի վրայ չար մարդկանց ձեռից.
Ոչ ոք ինձ համար արտսունք չի թափում,
Զուրկ եմ նոյնպէս և մի վրէժխնդրից։—

Եւ ընկնում է իր առած վէրքերից.
Աղմկում էին կռունկներն վերից,
Երբ այլևս աչքի լոյսից զրկուած
Լսում էր միայն ձայները նրանց.
—Դուք եղէք գոնէ, ով իմ կռունկներ,
Մինչ լռելու է ձայնը մարդկային,
Իմ դժբախտ մահի բողոքարկուներն...
Ասաց վերջապէս և փակեց աչուին։—

Դտան նրա մերկ դիակը սառած,
Որ թէպէտ վէրքից նոր գոյն էր առած,
Սակայն ճանաչեց նրա բարեկամ
Եւ Կորնթոսի վանատու իշխանն։
Ա՜յս կերպ, ով երգիչ, տեսնէի քեզ ես,
Մինչ իմ փափաքն էր հիւսել քո ճակտին
Եղևնեայ պսակ շքեղ ու պէս պէս.—
Գոչեց ու ողբաց ձայնով վշտագին։

Եւ Պոսիդոնի տօնին հաւաքուած
Բոլոր հիւրերը լալիս են ցաւած.
Կորուստն էր անդարձ, ուստի և վիշտը
Պատում է բոլոր յոյների սիրտը,
Որոնք զայրոյթի չափ չեն ճանաչում,
Խուժում են մօտը ատենակալի.
Մեռածի համար վրէժ պահանջում,
Թափել արիւնը մարդասպանների։

Բայց ո՞ւր էր հետքը, որ այդ խա-
դերի
Փառքից շլացած ժողովուրդների
Ամբոխի միջից մատնանիշ անէր
Եղեռնագործին։ Արդեօք մի հէ՞ն էր
Վատ ու քարասիրտ, որ կատարեց այդ
Թէ մի թաքնուած ստոր թշնամի.
Ոչոքի, միայն Հելիոսին է յայտ,
Որին երկրի վրայ ոչինչ կայ գաղտնի։

Նա այժմ էլ գուցէ ժպիրհ քայլերով
Գնում է հենց նոյն յոյների մէջով,

Որք մինչ եղածի վրէժն են հայցում,
Ինքը իր ոճրի պտուղն է քաղում,
Կամ աստուածների հակառակ կամքին
Գուցէ հենց նորանց տաճարի մէջտեղ
Խառնում է իրան այն մարդկանց շարքին,
Որք՝ թատերասէր՝ դիզուել են այնտեղ։

Նստարանները կպչում են իրար,
Ամբոխն աճում է, խռնում անդադար,
Եկած, ժողովուած մօտից կամ հեռուից,
Քիչ է մնում հանեն բեմն իրա տեղից։
Խուլ մռնչիւնով որպէս ալիքներ,
Քանի աճում է թիւը մարդերի,
Ձէնքը հասնում է տակաւ դէպի վեր
Մինչև կապուտակ կամարն եթերի։

Եւ ո՞վ կարող է թուել մի առ մի
Ցեղով անունով հիւրերն հանդէսի,
Թեսեսի քաղաքն, ինչպէս և Ալիս,
Լակեդեմոնն ու անուանին Փոկիս,
Ասիոյ ափերն ու կղզիք բոլոր,
Բոլորն էլ ունին ներկայացուցներ,

Որոնք վերևից լսում են ինչ որ
Երգում է պարը—երգ զարհուրարե՛ր։

Պարը խիստ ու լուրջ, ինչպէս սովոր էր,
Յամր ու համաչափ ուղղում է քայլեր,
Բեմի ետևից առաջ ընթանում,
Թատրոնի չորս դին շրջան է անում.
Հողածին կանայք չեն քայլում այսպէս,
Սրանք գերբնական էակներ էին,
Որք բարձրահասակ հսկաներ որպէս
Զունէին մարդու հասարակ մարմին։

Մէջքները ծածկած սև վերարկուով
Ճօճում են, դարձնում մսաքանց ձեռով
Ջահի արձակած բոցն աղօտագին,
Չկայ արեան հետք ոչ մէկի դէմքին.
Իսկ մինչ մեղմաբար հերք ալեծածան
Մարդկային ճակտից տատանում են ցած,
Տեսնում ես այստեղ իժ և օձ միայն՝
Սպանիչ թոյնով փորներն ուռցրած։

Եւ սկսում են շրջել միատեղ.
Հնչում է նրանց նուագը ահեղ,
Որ մինչ սրտերի խորն է թափանցում

Եւ ոճրագործին ցանցի մէջ ձգում.
Հնչում է երգը Երինէների,
Ուշաթափ անում, մոլորում սրտերն,—
Ապշում է ամբոխն ունկնդիրների,
Տեղի են տալիս, լռում քնարներն։

—Երանի նրան, որ մեղքից ազատ
Ունի մանկական հոգի անարատ.
Զունինք դէպի՛ նա մենք սիրտ ոչ ակալ,
Կարող է ազատ ուր ուզէ գնալ։
Բայց վա՛յ, վա՛յ նրան, որ գաղտագողի
Թափում է արիւնն անմեղ մարդկերանց.
Մենք կը հալածենք, ձեռքից չենք թողնի
Խաւարի այդ չար ծնունդն անիծուած։

Իսկ թէ կարծում է խուսափել մեզնից,
Մենք կը սլանանք իրա ետևից.
Ցանցեր կը լարենք խոյս տուող ոտին,
Որ ինքն ստիպուած գլորուի գետին։
Այսպէս պիտ՝ անխոնջ հալածենք նրան,
Ոչ մի զղջումի մենք տեղի չենք տալ.
Հալածենք պիտի իր ստուերն անգամ,

Մի քայլ իսկ ազատ չի կարող գնալ։—

Այսկերպ երգում են. բոլորում պարում
Եւ խաղաղութեամբ տունն ամբողջ լցնում
Ինչպէս մի խորին լռութեամբ մահուան.
Կարծես դիք էին մօտեցել այդ տան։
Եւ պարը շքով, ինչպէս սովոր էր,
Թատրոնի չորս դին շրջան է անում,
Յամբ ու համաչափ ուղղում է քայլերն
Եւ անյայտանում բեմի եաեում։

Եւ բարախում են կուրծք ալետատան
Նենգութեան միջև և ճշմարտութեան,
Եւ սարսափահար մնում այն ոյժից,
Որ հսկում է միշտ մթութեան միջից,
Որ անթափանց է և միշտ անքնին,
Հիւսում է աղօտ կծիկը բախտի,
Ծանօթ է սրտի բոլոր խորշերին,
Միայն խոյս տալիս լոյսից արևի։

Բայց ահա մի ձայն սանդուղի վերին
Աստիճաններից հասնում է մեկին։

—Նայիր, Տիմոթէ, նայիր դէպի վեր,
Տես Իբիկոսի ասած կռունկներ,—
Երկինքը յանկարծ մութ գոյն է առնում,
Երբ կռունկների մի խումբ սևորակ
Թատրոնի վերից թռչում է, անցնում
Իբր օդասլաց մի անկարգ բանակ։

Ի՞նչ, Իբիկոսի,—այս անգին անունն
Էլի է յուզում սրտերն ամենուն.
Եւ ինչպէս ծովում ալիքից ալիք
Բերանից բերան խօսում են մարդիկ.
Ա՞յն Իբիկոսի, որ լաց ենք լինում,
Որ սպանուել է մարդասպաններից,
Դրա համար ինչ. ինչ է կամենում,
Ի՞նչ է դա ուզում այդ կռունկներից։ —

Եւ քանի գնում, հարցը բարձրանում,
Կայծի պէս արագ թռչում է, անցնում
Բոլոր սրտերից.—Տեսնում էք, ահա,
Եումենիտների զօրութիւնն է սա.
Լուծուի վրէժը բարեպաշտ երգչի.
Մէջտեղ կանչեցէք եղեռնագործին,

Բռնեցէք առաջ իբրև սպանչի
Նրան որ խօսեց, ապա խօսակցին։

Ա՜խ, երանի՜ թէ բերնիցը փախած
Խօսքը կրծքում դեռ մնար թաք կացած,
Բայց իզո՞ւր, ահից տժգունած բերանն
Հանում է յանցանքն իսկոյն երևան։
Դատաւորի մօտ բերում են նրանց,
Թատերաբեմը դառնում է ատեան,
Խոստովանումն ոճիրը իրանց
Եւ ենթարկուում վրէժխնդրութեան։

ՀԵՐՕ 1 ԵՒ ԼԷԱՆԴՐ 2

(Hero und Leander)

Տեսնո՞ւմ էք, ինչպէս այնտեղ հնապանծ
Երկու դղեակներ նայում են միմեանց
Փայլելով արփու ոսկի շողերից,

(1 Հերօ—Ասոդիկի քրմուհին։

(2 Լէանդր—Աբիդոսցի յոյն երիտասարդ, Հերօի սիրահարը։

Մինչ Հելլեսպոնտի ալիքներն ուժգին
Մռնչում, յուզուում, հասնում են երկին
Դարդանելի սէգ ժայռերի դռնից։
Լսո՞ւմ էք, ինչպէս կոծում են ալիք,
Խփուում ժայռերին, հանում փոթորիկ
Խլելով Եւրոպն Ասիոյ գրկից։
Չի վախում նրանցից սէրը միայնիկ։

Սուրբ, աստուածային ոյժովը իր Սէր
Վշտերի նետով յարուցեց յոյզեր
Հերօի սրտում, նոյն և Լէանդրի։
Հերօն ծաղկում էր Հեբէի նման,
Միւսը սարերում գալիս էր միշտ ման։
Սպառազինուած զէնքերով որսի։
Սակայն հայրերի քէնը փոխադարձ
Խզեց սիրահար զոյգի կապն յանկարծ,
Որով վտանգի վէրին սոսկալի
Սիրոյ պտուղը մնաց միշտ կախուած։

Այնտեղ Սեստոսի ժայռի գագաթին,
Որին յարատև յորձանքով ուժգին
Հելլեսպոնտոսը փրփուր է բաղխում,

Նստել է մենակ կոյսը տխրաղդած,
Աչքն Աբիւդոսի եղերքին յառած,
Որտեղ իր սրտի հատորն է ապրում։
Ա՜խ, չկայ կամուրջ, չկայ մի գերան
Դէպի հեռաւոր ափն այդ սիրական,
Ոչ էլ այն կողմում նաւ է երևում.
Բայց դրա էլ սէրը գտել է ճամբան։

Մութ շաւիղներից Լաբիւրինթոսի
Նա դուրս է հանում կծկով այնպիսի,
Որ հաւկուրին իսկ խելօք է դարձնում.
Լուծի է բերում նա գազաններին,
Եւ կրակ շնչող վայրագ ցուլերին
Ադամանդահիւս արօրին լծում.
Նոյնիսկ ինն անգամ շրջան կատարող
Ստիւքսն այդ քաջին չի եղել մերժող.
Որ իր սիրածին բազկով աննկուն
Խլեց Պլուտոնի տանից մթասքող։

Այժմ էլ յորձանուտ ջրերի միջով
Տենչանքի հուրն ու բոցն արծարծելով
Վառում է դիւցազն հոգին Լէանդրի։
Երբ տժգնում են արևի շողերն,

Անվախ պատանին, թափ տալով թևերն,
Ճեղքում է ծովի ջրերն ամեհի,
Եւ միշտ լող տալով բազկով աննկուն՝
Պոնտոսի մթին, գոռ ալիքներում,
Ձգնում է հասնել ափն այն փարելի,
Որտեղ, վերևում, մի ջահ է վառուում։

Եւ սիրելուհու քնքուշիկ գրկում
Բախտաւոր տղան միշտ հանգիստ գտնում,
Իր յոգնութիւնից առնում է դադար
Եւ դից ընդունում վարձքն հանապազօր,
Որ տալիս է նրան Սէրն ամենազօր՝
Գրկախառնութեամբ միշտ բերկրապատար,

Մինչև այդ ծոյլին երազից ոսկի
Գալիս հանում է ձեռն Արշալոյսի
Եւ ծածկում ծովի անկողնի մէջ սառ՝
Խլելով Սիրոյ ծոցից հեշտալի։

Եւ երջանկացած զոյգից այս կերպով
Երեսուն արև անցաւ խոյս տալով,
Մինչ խլում էր զոյգն հեշտանքներ գաղտնի,

Ինչպէս հարսնական գիշերուայ քաղցրիկ
Վայելքներ, որոնց տենչում են և դիք՝
Ցաւէտ անթառամ, յաւէտ պատանի։
Ով դեռ դժոխքի գետափին նստած՝
Ահով, սարսուռով չի յափշտակած
Այդ չնաշխարհիկ պտուղը երկնի,
Նա երջանկութիւն դեռ չի ճաշակած։

Եւ պարբերաբար Այդն ու Արուսեակ
Փայլում են երկնի վրայ կապուտակ,
Բայց զոյգն երջանիկ կարծես թէ բնաւ
Չէր տեսնում թափուելը տերևների
Կամ մօտենալը ցասկոտ ձմեռի
Ցրտաշունչ հիւսսի յարկերից խոնաւ։
Ինչքան աւելի որ կարճացաւ տիւն,
Այնքան բերկրեցան նրանք այդ առթիւ.
Գիշերներն երկար, հեշտանքներն անբաւ,
Տալիս էին Զևսին ե՛ւ փառք ե՛ւ պատիւ։

Իսկ մի օր արդէն օր ու գիշերուայ
Հաւասար էր կշիռն երկնքի վերայ,
Երբ չքնաղ կոյսը ժայռի գագաթից
Նայում, տեսնում էր, ի՛նչպէս եթերի

Գիրկն են խոյս տալիս ձիանքն արևի,
Մինչ ցածում ծովը հանդարտ ու անբիծ՝
Ե՛ւ մաքուր եւ ջինջ՝հայելու նման՝
Հանգչում էր բնութեան ծոցում անսահ-
ման,

Երբ բիւրեղակերտ այս մեծ որբանից
Չէր լսուում քամու մի շշիւն անգամ։

Լռելեայն հիւսուած այս սիրոյ կապին
Միայնիկ վկայ՝ դլփիններն էին,
Որոնց խմբերը այժմ ուրախ զուարթ
Պար էին գալիս ծովի խորերում
Ջինջ, արծաթափայլ տարրի շորս կողմում,
Երբ դուրս էր թռչում՝ մարմնով
գունազարդ,
Թետիսի գունդը ծովի խորերից,
Թէև դրանց էլ խօսքը բերանից
Խլել էր ընդ միշտ դիցուհին Հեկատ,
Որով զուրկ էին խօսելու բախտից։

Եւ սքանչացած ծովից գեղեցիկ՝
Խօսեցաւ Հերօն ձայն տալով հեզիկ,
Խնդութեամբ դէպի Տարրը դառնալով.

Արդար ես դու միշտ, ով չքնաղ աստուած,
Նա ինքն է խաբող, խոստմնադրուժ և
ցած,
Ով քեզ կ'ասի կեղծ՝ սրբապիղծ լեզուով·
Կեղծ է մարդկային ազգը բոլանդակ,
Քարի է նման հոր սիրտը վայրագ,
Մինչդեռ դու քաղցր ես և խոնարհ
հոգւով·
Սիրոյ վիշտն յուզում է քո սիրտն ու
հոգեակ։

Ես այս ամայի ժայռերի խորշում՝
Ողբում, լալիս եմ, ծաղկի պէս թօշնում
Յաւիտենական թախիծը դէմիս,
Մինչ դու բերում ես քամակիդ առած,
Թէև ոչ նաւ կայ, ոչ կամուրջ ձգուած,
Գիրկս դնելու միակ մտերմիս։
Սոսկալի է քո յատակը մթին,
Երկիւղով լի են ալիքներդ ուժգին,
Բայց պաղատում է քեզ սէրն երկուսիս,
Քեզ նուաճում է դիւցազնի հոգին։

Ինչու որ քեզ էլ, ով ալեաց աստուած,

Երովսի հզօր ազեղն է դիպած
Այն օրը, երբոր դեռ ծաղկահասակ
Հելլէն և իրա եղբայրն անվեհեր
Կտրելով քո խոր գահոյքը անեղը՝
Թռցնում էին խոյն ոսկեգիսակ։
Դու յաղթահարուած իր հրապոյրքից՝
Զեռդ երկարեցիր մուխ վէրի խորքից
Եւ քաշ տուեցիր մինչ ծովի յատակն
Աննման կոյսին խոյի քամակից։

Նա աստծուդ հետ իբր աստուածուհի
Խոր քարայրներումն ապրում է ջրի
Եւ այժմ իր անմահ կեանքն առաջ տա-
նում։
Ջնորհիւ անխոնջ սիրոյ օգնութեան
Նա յաղթում է քո վայրագ ցանկութեան
Եւ նաւավարին նաւհանգիստ ուղղում։
Գեղեցիկ Հելլէ, պերճ աստուածուհիս,
Քեզ եմ պաղատում, լսիր աղերսիս.
Այսօր էլ կրկին իմ սիրեցեալն
Բեր գիրկս հասցրու, խնդրում եմ, հոգիս։

—Եւ ջրերն արդէն մթագնում էին,
Երբ նա վերևում, ժայռի գագաթին,
Վառեց իր ջահը ծածանող բոցով,
Որպէսզի խորին և նսեմաստուեր
Անդունդի միջից պատանին տեսնէր
Ուխտուած սուրբ սէրն այդ իսկ նշանով։
Բայց ահա հեռուից լսուում են ձայներ,
Քամին մռնչում, յուզուում են ջրեր,
Աստղերի լոյսը պատում է քողով,
Զարթնել են ուզում խեղդող մրրիկներ։

Պոնտոսի անթիւ ալեաց երեսին
Պատում է գիշեր և մրրկածին
Ամպերի ծոցից հեղեղներ տեղում։
Կրակոտ շանթերն օդը պատռում են,
Փոթորիկները քնից զարթնում են՝
Թողնելով իրանց որբանն ու հին տուն։
Եւ բամիները կրկին ու կրկին
Խռովում, ճեղքում են անդունդն ահագին,
Որն որ դժոխքի բերանի հանգոյն՝

Յօրանջում, բացուում, ոռնում է ուժգին։

—Վայ ինձ, զոչում է խեղճը և լալիս,
Վայ ինձ, մեծդ Զևս, խղճա դժբախտիս.
Ա՜խ, ինչ էր որ ես ժպրհեցայ խնդրել.
Թէ աստուածները լսեն աղերսիս,
Թէ նենգ ծովերին զոհուի սիրելիս,
Փոթորկից խեղդուած ստիպուի մեռնել...
Փախուստ են տալիս ծովային բոլոր
Թռչուններն իրանց բոյներն հեռաւոր,
Եւ ծովախորշում բոլոր նաւերն էլ
Մրրկից ազատ՝ գտնում են անդորր։

Ա՜խ, նորից անշուշտ անվախ պատանին
Ձեռնարկել է իր յանդուգն գործին՝
Մղուած մի հզօր աստուածի կողմից։
Բաժանման ժամին ուխտով սրբազան
Ուխտել է նա ինձ սէր յաւերժական.
Մահը լոկ նրան կը բաժնէ ինձնից։
Ա՜խ, այս վայրկեանին նա ճակատ ճակտի
Ծանտ փոթորկի դէմ կանգնել է մարտի.
Եւ ջրերն ազատ իրանց սանձերից՝

Կուլ կը տան նրան բերնով վիթխարի։

Նենգամիտ Պոնտոս, հանգիստդ խաղաղ
Էր դաւաճանի դիմակը խարդախ,
Մինչ փայլում էիր հայելու նման։
Չկար երեսիդ մի թեթև ծփանք,
Հանգչում էին քո ալիքն ու յորձանք,
Երբ հրապոյրներերդ գրաւեցին նրան՝
Քաշ տալով դէպի ծոցդ նենգաւոր,
Ուստից ետ դառնալ չէ հնարաւոր.
Ա՜խ, ո՞ւր է տեսնէր միայն դաւաճանն
Այդ յորձանքներիդ սարսափը բոլոր։—

Եւ մինչ աճում է ժխորն ամպրոպի,
Բարձրանում է ծովն և կարծես թէ մի
Լեռնաշղթայ է հիւսում ալիքից,
Որ ուռչում, փրփրում, հասնում է երկին
Եւ իջնում, բաղխում խութերի ոտքին։
Մինչև իսկ նաւի կաղնի կողերից
Ոչ մէկն անվնաս ափը չհասաւ,
Իսկ ջահը քամու շնչից հանգաւ,
Որով և ուղին զուրկ մնաց լոյսից—
Թէ՛ ծով, թէ՛ ցամաք ահով պատեցաւ։

Եւ պաղատագին Հերոն դառնում է
Դէպի Աստղիկը, որ նա պատուիրէ
Փոթորկին մեղմել ջրերի ցասումն՝
Ուխտ անելով, որ խիստ քամիներին
Կը բերէ ինքը զոհեր մեծագին,
Ինչպէս ոսկեղջիւր մի հատ ցուլ սիրուն։
Անդունդի բոլոր դիցուհիներին,
Բարձունքի բոլոր նա աստուածներին
Իւրը ձեռն տուած ապերս է կարդում՝
Խառնելով իւրը ծովի ջրերին։

—Լսիր աղերսիս, լսիր, դիցուհի,
Դալար յարկերի դու վեհ տիրուհի,
Լսիր, երջանիկդ իմ Լեկոթէա.
Դու որ փրկիչ ես միշտ հանդիսացած
Խեղճ նաւավարին, որ կաշկանդուած
Փոթորկի ձեռին՝ տեսել է իր մահ,
Այժմ էլ տարածիր գլխին Էանդրի,
Քո սուրբ քողը, որ իր խորհրդալի
Ծածանումովը փրկէ և նրա
Կեանքն ալիքների շիրմից սոսկալի։

Եւ դաղարում են կատաղի հողմերն,

Այնտեղ երկնքում փայլում են շողեր,
Ելնում է Էոսն իր ձիաններով.
Եւ նորից խաղաղ, իր հին անկողնում,
Հանգչում է Պոնտոսն հայելու հանգոյն,
Նորից են ժպտում և՛ եթեր և՛ ծով.
Եւ փշրուելով հեզիկ ալեակներն,
Ջոյում, փայփայում են ափի ժայռերն
Եւ քաշ են տալիս, հանդարտ խաղալով,
Մի անշունչ դիակ դէպի ծովեզեր։

Ա՜խ, Լէանդրն է, որ շնչից զրկուած,
Բայց իր սուրբ ուխտը դեռ չի մոռացած.
Տեսնում է կոյսը, ճանաչում նրան,
Եւ առանց ողբի մի ձայն հանելու,
Առանց մի կաթիլ արտասունք թափելու,
Սառն և յուսահատ նայում է միայն։
Նա անմխիթար նայում է վհին,
Նայում եթերի շողշողուն լոյսին,
Այն ինչ գունաթափ իր դէմքն աննման՝
Ջիկնում է հրով իրը համեստ լուսին։

Ճանաչում եմ ձեզ, ով զօրութիւններ,

Դուք գործ էք դնում ձեր իրաւունքներն
Ահ ու սարսափով, անողոքաբար։
Վաղուց էր ինձ այս վիճակուել, գիտեմ,
Բայց երջանկութիւն ես ճաշակել եմ,
Արդ, լաւագոյնն էլ այս էր ինձ համար։
Բովանդակ կեանքս նուիրել եմ քեզ,
Քո սուրբ բազնին եմ ծառայել միշտ ես,
Այժմ էլ թող լինիմ քո զոհը խոնարհ.
Ա՛ստղիկ, մեծ դշխոյ, չլինի մերժես։ —

Ասում, նետուում է ժայռի գագաթից
Կոյսը դէպի ծով, զրկուում կեանքից.
Ծածանում էին շորերն իր հագին։
Անշունչ դիակներն այդ սրբանուէր
Թաւալում է դէպ ի ալեաց խորերն
Ինքը լինելով գերեզման զոյգին.
Եւ բաւական գոհ իր կողոպուտից՝
Սողում է առաջ և անհատ կոյժից
Իր յորձանքները, որոնք վերջ չունին,
Հոսում է, հոսում միշտ նոր ու նորից։

1900

ԿԱՍՍԱՆԴՐԱ

(Kassandra.)

Տրոյայի սրահներում կար մեծ խնդութիւն՝
Դեռ չկործանուած պարիսպներն ամուր.
Մի տեղ հարսանիք, պարեր ու կայթիւն,
Միւսում քնարի երգեր քաղցրալուր։
Ամեն ով որ կայ, քրտինքը ճակտին,
Լայագին կռուից առնում է գաղար.
Պրիամ արքայի գեղեցիկ դուստրին
Պելիսեանն հարս է տանում իր հտմար։

Եւ գափնեպսակ գնում են կառքերն
Իրար ետեից մեծ հանդէս ուրքած՝
Դէպ աստուածների սրբազան յարկերն,
Ուր կայ Թիմբրացու բագինը կանգնած։
Ամենքը հարբած Բաքոսի շնչից՝
Մռնչում, ընկնում են հրապարակներում,

Բացի մի լքուած, սգաւոր կրծքից,
Որ տառապում էր վշտերով անհուն։

Զուրկ խնդութիւնից խնդութեան ծովում,
Մենակ մնացած, առանց ընկերի,
Գնում էր լռիկ Կասսանդրան տրտում՝
Դափնեաց անտառը մեծն Ապոլոնի։
Հազիւ թէ հասաւ մարգարէուհին
Անտառի խորը, սաստիկ զայրոյթով
Իր ապարօշը շպրտեց գետին՝
Այսպէս սրտառուչ բողոք բառնալով.

—Ամեն գուռ բաց է խնդութեան համար,
Ամենքն երջանիկ զգում են իրանց,
Ծերուկ ծնողներս յոյս ունին պայծառ,
Եւ քոյրս ունի զարդեր ճոխապանծ.
Միայն ես եմ որ հեծում մենակ,
Փախել է ինձնից ցնորքն անուշիկ.
Ինչեր եմ տեսնում. կործանումն արագ
Մեր պարիսպներին գալիս է մօտիկ։

Տեսնում եմ, ահա, մի ջահ է վառուում,
Բայց այդ ջահը չէ Հիմէնի ձեռին.

Տեսնում եմ, բոցը ամպերն է հասնում,
Բայց ոչ թէ նման զոհի բոցերին.
Տեսնում եմ, զուարթ սարքում են հանդէս,
Բայց և լսում եմ հոգւով նախազգած,
Որ մի աստուած է գալիս դէպի մեզ՝
Բերելով իր հետ լաց ու աւերած։

Շեն դնում ականջ իմ բողոքներին,
Եւ հեգնելով են վշտերս դիտում,
Մինչ ես միայնակ սրտիս ցաւերին
Դեռ պէտք է տանիմ այս խուլ վայրերում,
Խոյս տուած բոլոր երջանկներից
Եւ ուրախների ծիծաղը շարժած.
Ի՜նչ ծանր բաժին ստացայ քեզնից,
Ո՜վ դու մեծ Պիւթեան, նենգամիտ աստուած։

Ինչու համար դու ինձ ես կամեցած
Ընտրել քարոզիչ քո պատգամների
Այնպիսի տեղում, ուր, մտքով փակուած՝
Նման են մարդիկ միայն կոյրերի։

Ինչու ես տուել ինձ կարողութիւն
Տեսնելու միայն, ոչ արգիլելու.
Ինչ որ ծածկել ես, է իրողութիւն,
Եւ գուշակածներս հանդէս են գալու։

Արժէ բայց անել քողն այն ժամանակ,
Երբ մօտ է արդէն վտանգն ահաւոր.
Կեանք--մոլորութիւնն է տալիս մենակ,
Դիտութիւնը՝ մահ մարդկերանց բոլոր։
Վերցրու, ո՜հ, վերցրու դու յստակութեան
Տխուր քողն աչքիցս· արդէն եմ տեսնում.
Զարհուրելի է քո ճշմարտութեան
Լինել հոգեղէն անօթն աշխարհում։

Տուր ինձ առաջուայ կուրութիւնս կրկին
Եւ նախկին խաւար միտքս խնդալի.
Լռեցին երգերն իմ զուարթագին,
Հենց որ հոչակողն եղայ քո ձայնի.
Դու ապագայի դարձրիր ինձ տէր,
Խլեցիր սակայն ինձնից իմ ներկան,

Խլեցիր կեանքիս դու զուարթ ժամեր—
Կեղծ է քո պարգևն, յետ վերցուր նրան։

Երբեք հարսնութեան չտեսան պսակ
Իմ մատաղ գլխի հերքն անուշաբոյր՝
Այն օրից, երբ ես կեանքս բովանդակ
Նուէր բերեցի բագնիդ մօտ տխուր։
Արտասունքով անցաւ իմ պատանութիւնն
Ես հանաչեցի միայն վիշտ ու ցաւ,
Եւ իմ տիներիս կրած նեղութիւնն
Զգայուն սրտիս խոր վէրքեր տուաւ։

Տեսնում եմ շուրջս խաղեր ու խնդում,
Տեսնում եմ, աղջկերք և ողջ պատանիք
Ապրում, սիրում են բերկրանքով ան-
հուն,
Մինչ իմ հեծում է սիրտն ապերջանիկ.
Էլ ինչու զարունն ինձ պիտի ժպտի
Ձրեղ զարդարած բնութեան ծոցում.
Ո՞վ կը ճաշակէ վայելքը կեանքի,
Եթէ այդ կեանքի խորն է թափանցում։

Երնեկ, ասում եմ, Պոլիքսենէին,

Որ սիրտը վառուած սիրոյ կայծերից՝
Յուսում է շուտով դառնալ ամուսին
Ամենից վեհին Հելլէն քաջերից.
Նրա կուրծքն այժմ բարձրանում է
հպարտ,
Հազիւ է զսպում իր բերկրանքները.
Ձեզ մինչև անգամ չի նախանձում արդ,
Ա՛ստուածներ, քաղցր են իր ցնորքները։

Ես էլ եմ տեսել այդ քաջ դիւցազնին,
Որին և ընտրեց սիրտս սիրալից.
Ջողում է աղերս իր գողտր աչերին՝
Վառուած, բորբոքուած սիրոյ կրակից.
Ո՞ւր էր նրա հետ, իբրև ամուսնի,
Ապրէի ես իմ բնիկ յարկի տակ . . .
Բայց, ափսո՜ս, մեր մէջ ստուերն Ստիքսի
Կանգնած է որպէս մի մութ ամբարտակ։

Եւ Պրոսէրպինան ինձ է ուղարկում
Իր ուրուականներն անգոյն, անկենդան,
Որ ամենուրեք ինձ են հետևում,
Ուր որ գնում եմ, ուր գալիս եմ ման
Այդ քստմնելի դէմքերը դաժան

ՕՏ. ՓՈՒՆՋԵՐ. Ա. ՀԻՍՍ

ԳՐԱԴԱՐԱՆ

Թունաւորում են դեռ մատաղ խաղերս.
Թողնելով ինձ լոկ ցաւեր անսահման,
Որ երբեք, երբեք չբերկրիմ այլևս։

Տեսնում եմ, ահա, շողում է սուսերն
Եւ մարդասպանի աչերը վառուում.
Էլ ինչ անեմ ես. սարսափ ու աւեր,
Զուրջս նայել իսկ չեմ կարողանում,
Թող թէ սոսկալի փորձանքից պրծնել.
Կամայ ակամայ ստիպուած եմ ես,
Ինչպէս որ բախտս է ինձ տնօրինել,
Օտար աշխարհում ողբալ սև օրերս։

Եւ մինչ հնչում են դեռ նրա բառերն,
Բամբ... աղմկալից մի ձայն է լսուում
Տաճարի դռնից. կոտորած, տուեր՝
Թեսիսի որդին սփռում է հեռուում.
Հեռ թափ է տալիս իժեր ու օձեր,
Աստուածներն ամէն փախուստ են տալիս,
Եւ որոտալից ամպ ու ամպրոպներ
Խեղճ Իլիոնի վրայ են գալիս։

1901

ԴԵՄԵՏՐԷԻ ԲՈՂՈՔԸ

(Klage der Ceres)

Նորից է եկել գարունը պայծառ,
Նորից երկիրը մանուկ է դառնում,
Կանաչանում է բլուրն արևառ,
Սառոյցի կեղևն հալուելով թափուում։
Գետերի կապոյտ հայելու տակից
Ծպտում է Զևսի դէմքը լուսասփիւռ,
Մատղաշ ծիլն աչք է բաց անում նորից,
Մինչդեռ անուշիկ փչում է զեփիւռ։
Ծառաստաններում զարթնում են երգեր,
Եւ լեռնահարսը դժբախտիս ասում.—
Ահա դառնում են ծառ ու ծաղիկներ,
Բայց չի դառնում քո դուստրը սիրասուն։—

Ա՜խ, երբուանից է ես ման եմ գալիս
Կրկին ու կրկին երկրի դաշտերում.
Տիտան, ճաճանչներդ ողջ շաղ եմ տալիս,
Որ գտնեն հետքը զաւկիս սիրասուն.
Բայց դեռ ոչ մէկը ոչինչ չի ասել,
Թէ ուր է չքնաղ դստրիկս անգին,

Իսկ ամենատես արևի լոյսն էլ,
Նա էլ չի գտնում իմ կորած զաւկին։
Դու՛ նրան, ո՞վ Զևս, խլեցիր ինձնից,
Թէ՞ չէ Պլուտոնն էր հրապուրուած
Նրա սրտագրաւ շարժ ու ձևերից,
Որ մինչ Հադէսի սև գետն է՞ տարած։

Ո՞վ է տանելու, իբրև սուրհանդակ,
Թախիծս դէպի այդ մթին ափերն.
Քարոնի կուրը թողնում է ցամաքն
Ու ընդդրկում է միմիայն ստուերը։
Ո՛չ մի երջանիկ չի եղել դեռ ևս,
Որ տեսած լինի դաշտերն այդ խաւար.
Քանի հոսում է Ստիւքսը այդպէս,
Չի կրել դեռևս կենդանի նկար։
Դէպի ցած տանող կան բիւր սանդուղներ,
Բայց չկայ մի հատ՝ լոյս աշխարհ հանող.
Չկայ մի վկայ՝ դստրիս արտասունքներն
Ինձ՝ երկչոտ մայրիս՝ բերելու կարող։

Մայրերն այն, որոնք Պիւռհայի ցեղից
Առել են իրանց բնութիւնն հողածին,
Չեն կարող շիրմի բոցերի միջից

Հետևել իրանց որդկերանց անդին։
Միայն Զևսի տան բնակիչներն են,
Որ չեն մոտենում այդ խաւար եզրին.
Միայն երջանիկ էակներիս են
Խնայում՝ Պարկայք, ձեռները ձերին։
Զգեցէք սակայն դիշերանց դիշերն
Ինձ դուք երկնքի ոսկի յարկերից.
Անարգեցէք իմ սուրբ իրաւունքներն,
Քանի որ դրանք տանջանքներ են ինձ։

Իջնեմ ես այնտեղ, ուր դուստրիս՝ մթին
Իր ամուսնու հետ իշխում է տրտում.
Գնամ ողջունել իշխանուհին
Դանդաղ ստուերով մթութեան միջում։
Ա՜խ, նրա աչերն՝ արտասունքից թրջած՝
Զո՛ւր են որոնում ոսկեփայլ շողեր.
Յածում են դէպի գունդեր հեռացած,
Չեն տեսնում սակայն իմ թափած ցողեր.
Մինչև բերկրանքը գայ գտնէ նրան,
Մինչև իր կրծքին կուրծքս միանայ,
Ու տեղի տալով սուրբ կարեկցութեան՝
Նոյնիսկ քարասիրտ դժոխքը ողբայ։

Անհիմն իղձեր, անլուր բողոքներ...
Քանի դեռ խաղաղ ու միանման
Դառնում են օրուայ կառքի անիւներ՝
Պահելով Զևսի վճիռն անխափան։
Զևս շուռ է տալիս իր գերերջանիկ
Գլուխը մի կողմ՝ հեռու խաւարից,
Այնինչ խաւարում դուստրըս միայնիկ
Մնում է յաւէտ խլուած ինձանից։
Մինչև մութ գետի սև սև ջրերում
Վառ արշալոյսի շողերը ցոլան,
Մինչև որ Իռիսն և այդ վայրերում
Զգէ իր սիրուն աղեղն աննման։

Բայց մինթէ ոչինչ չկայ իմ դուստրից
Իբրև յուշարար մի գրաւական.
Եւ ոչ իսկ մի հեռ իր գիրգ ձեռներից
Իբրև հեռաւոր սուրբ սիրոյ նշան։
Չկայ միացնող մի սիրոյ կծիկ
Բացակայ զաւկին սպասող մօր հետ.
Չկայ ոչ մի կապ, որով կենդանիք
Կապուած մնային մեռածների հետ...։
Ո՜չ, բոլորովին ձեռից չի ելած,

Ո՜չ, դեռ բաժանուած չենք բոլորովին.
Ո՜չ, դեռ մի լեզու պարգև են տուած
Մեզ աստուածները՝ յաւէտ երկնային։

Հենց որ մեռնում են զարնան զաւակ-
ներն,
Հենց որ հիւսիսի ցրտազգած շնչից
Դեղնում են բոլոր ծառ ու ծաղիկները,
Տխուր մացառն էլ զրկուում զարդից,
Ես կեանք եմ առնում, վեհապանծ մի կեանք
Վէրթումնի հարուստ ամպրթեղջիւրից.
Ստիւքսին նուէր բերում եմ այդ կեանքն,
Ինձ պահում մի սերմ այդ անցած կեան-
քից.
Ապա լալագին դնում եմ իսկոյն
Այդ սերմն երկրի մէջ աղջկանս կրծքին,
Որպէսզի լինի դա սիրուս լեզուն
Եւ պատմէ սրտիս վիշտը դառնագին։

Ու հիմայ երբոր պարը Ժամերի՝
Բերկրանքով ետ է դարձնում գարնան,
Մեռածին նորից հայեացքն արևի՝
Կեանք է պարգևում առաջուայ նման։

Ծիլերը, որոնց մի ակնթարթում
Զրկել էր կեանքից երկրի ծոցը սառ,
Բուսնում, աճում են, ծփում, ծածանում
Մէկից աւելի գոյներով պայծառ։
Երբ բունն ուզում է բարձրանալ երկին,
Դիշերն է պտռում արմատն երկիւղից։
Մէկը սնում է լոյսից արտաքին,
Միւսն աճում է Սաթուքսի ոյժից։

Կոկիւտի անոյշ ձայներն ինձ համար,
Ա՜խ, մի մի անգին սուրհանդակներ են,
Որ ժամանում են կիսով մեր աշխարհ,
Կիսով էլ այնտեղ, ուր մեռելներն են։
Եւ մինչդեռ գետը պարփակած ունի
Սիրելի դուստրիս սարսռոտ վհում,
Գարնան նորարաց մատղաշ ծիլերի
Միջից խօսում է բերանն այն սիրուն.
—Այստեղ, ուր չկան շողեր լուսավառ,
Ուր ստուերներն են թափառում տրտում,
Բաբախում են տաք կրծքեր սիրավառ,
Կայ սիրոյ կրակ քնքոյշ սրտերում։

—Ո՜հ, ընդունէք արդ, աչագեղ մանկտիք,

Ողջոյններս ջերմ, զուարթ, անարատ.
Վայելեցէք ձեր բաժակները լիք
Նեկտարի մաքուր փրփուրովն առատ։
Թողէք լուանամ շողերով ես ձեզ,
Որ Արշալոյսի դէմքին ճիշտ նման՝
Ձեր տերևները գոյներով պէս պէս՝
Փայլին Իռիսի լոյսովն աննման։
Թող զարնանային շողերում նախշուն՝
Քնքոյշ, մատաղհաս կրծքերը կարդան
Սրտիս բերկրանքը ու, երբ դայ աշուն,
Թօշնած պսակում՝ վիշտս յաւերժական։

1901

ՏՈԳԳԷՆԲՈՒՐԳԻ ԱՍՊԵՏԸ

(Ritter Toggenburg)

«Ա՛սպետ, քեզ միշտ սիրում եմ ես
Անկեղծ սրտով քոյրաբար.
Մի պահանջիր դու ուրիշ սէր,
Դա լոկ վիշտ է ինձ համար։
Խաղաղ պահիր սիրտդ դու միշտ,
Ուր էլ ուզես քո քայլերն.
Ինձ համար չեն այդ ողբն ու լաց,
Որ թրջում են քո աչեր»։

Եւ լսում է համբ վշտով,
Սրտումն արիւն ու կսկիծ,
Սեղմում է նրան իր կրծքին պինդ
Եւ բաժանուում նրանից.
Զայն է տալիս իր մարդկերանց
Զուիցերեան աշխարհում,
Եւ մի մի խաչ իրանց կրծքին՝
Սուրբ երկիրն են արշաւում։

Հերոսների բազուկն այնտեղ
Մեծ գործեր է կատարում,

Ծածանում են սաղաւարտներն
Ասիաների բանակում։
Մուսուլմանը սարսափում է
Տուգգէնբուրգցու անունից,
Բայց սա սրտով դեռ ևս թոյլ՝
Չի ազատուում իր վշտից։

Նա մի տարի տարաւ այդ սիրտն,
Այժմ այլևս չի տանում.
Չէր էլ կարող հանգիստ գտնել,
Թողնում է զօրքն ու դառնում։
Մի նաւ իջնում էր Յոպպէից՝
Առագաստները պարզած.
Նաւեց նա դէպ երկիրն այն թանկ,
Որտեղ իր գանձն էր թաղած։

Եւ նժդեհը հասաւ կոյսի
Դղեակի մօտ, բաղխեց դրան.
Բացուեց դուռը, սակայն, աւա՜ղ,
Ա՛յս էր լսած պատասխանն.
«Զուր մի՛ ման դալ. նա իրան երէկ
«Նուիրեց Տիրոջ երկնային,

«Եւ այժմ, իբրև երկնքի հարս,
«Քող է կրում իր գլխին։»

Եւ թողնում է ասպետն ընդմիշտ
Դղեակը իր հայրերի,
Թողնում է իր զէնքն ու զրահ
Եւ նժոյգն իր սիրելի.
Տոգէնրուբգից դուրս է գալիս
Իբրև անյայտ անծանօթ,
Ծածկելով իր բազուկները
Սև քուրձերի տակ մագոտ։

Եւ շինում է մի փոքրիկ հիւղ՝
Դէմ դիմաց այն ձորակին,
Ուր կար մի վանք՝ շրջապատուած
Լոռիներով տխրագին։
Առաւօտուայ արշալոյսից
Մինչ իրիկուն միայնակ
Նստում էր նա լռիկ մնջիկ՝
Դէմքին մի յոյս մեղմորակ։

Եւ նայում էր միշտ դէպի վանք,
Նայում էր միշտ դէպի վեր,

Սիրելուհու լուսամուտին,
Որ լուսամուտը բացուէր.
Որ հանդէս գար սիրելուհին,
Որ պատկերը այդ շքնաղ՝
Աչերն յառէր հովիտն ի վար
Իբր հրեշտակ միշտ խաղաղ։

Եւ նստում էր ուրախ զուարթ,
Մխիթարուած, գոհ սրտով՝
Սպասելով որ կրկին գար
Առաւօտն իր վայելքով։
Այսպէս նստաւ նա շատ օրեր,
Նստաւ օրեր, տարիներ,
Սպասելով գոհ, անտրտունջ,
Որ լուսամուտը բացուէր.

Որ հանդէս գար սիրելուհին,
Որ պատկերը այդ շքնաղ՝
Աչերն յառէր հովիտն ի վար
Իբր հրեշտակ միշտ խաղաղ։
Եւ նստել էր դիակնացած
Այսպէս նա մի առաւօտ,

Եւ նայում էր լուսամուտին,
Նայում էր դեռ աչքն աղօտ։

1901

ԵՐԿՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ

(Die Teilung der Erde)

«Առէք աշխարհն, ասաց Զևս
Իւր բարձունքից մարդկերանց,
Առէք, ձեզ եմ տալիս ես
Ժառանգութիւն իբր անանց.
Իբրև աւա՛ղ եմ նուիրում,
Վայելեցէք յաւիտեան,
Բայց եղբօր պէս ձեր միջում
Բաժանեցէք ինչ որ տամ»։

Այն ժամանակ ամէն մարդ
Փութաց, եկաւ ընտրութեան.
Պատանի թէ ալեզարդ՝
Բոլորն այնտեղ ընթացան.

Հողագործը՝ դաշտերի
Պտուղն ընտրեց իր համար.
Ազնուականը՝ որսի
Գնաց դէպի խոր անտառ։

Վաճառականն ստացաւ
Ինչ որ պէտք էր ամբարին.
Վանահայրը կամեցաւ
Ընտրել ազնիւ հին գինին.
Կամուրջներն ու փողոցներն
Առաւ արքան իր համար,
Եւ «տասանորդն», ասում էր,
Ի՛մն է, քանի կայ աշխարհ»։

Եւ շատ ուշ, երբ եղել էր
Բաժանումը աշխարհի,
Հեռուանց ահա՛ գալիս էր
Բանաստեղծն էլ մօտ Զևսի.
Սակայն, աւա՜ղ, չէր հնար
Տեսնել այլ ևս մի բան,
Որ իր տէրը չունենար.
Նրա վիշտն էր անսահման։

«Վա՜յ ինձ, միայն ես պիտի
Մուսացուէի ամէնքից.
Ե՞ս, որդին Քո սիրելի
Զրկուէի Քո տուրքից».
Արձակելով այսպիսի
Նա մի գանգատ դէպի վեր
Նետուեց, ընկաւ Դիոսի
Դահի առաջ ոսկեյեռ։

«Երազների աշխարհում
Թափառողը դու էիր,
Աստուածն յարեց բարձրանուն,
Այլևս ինձ հետ մի կռուիր.
Ո՞ւր էիր, երբ ամէն մարդ
Իրա բաժինը ընտրեց։
—Քեզ մօտ էի և եմ ցարդ».
Վրայ պուէտը բերեց։

«Աչերս Քո վեհ դէմքին
Յառել էի զմայլմամբ,
Ականջս՝ Քո երկնային
Նուագներին խնդութեամբ։
Ներիր անմեղ այն հոգուն,

Որ Քո լոյսը մեծարեց,
Որ ինչ ունէր այս երկրում,
Լոյսիդ սիրուն կորցրեց։

—Է՜հ, ինչ անեմ ես այլ ևս,
Էլ բաժանուած է աշխարհք,
Բանաստեղծին ասաց Զևս,
Զունիմ աշուն, որս, վաճառք.
Կամենում ես երկնքում
Ապրել ուրախ միշտ ինձ հետ.
Արի այստեղ, արի դուն.
Քեզ համար բաց է յաւէտ»։

1901

ՕՏ. ՓՈՒՆՋԵՐ. Ա. ՀԻՒՍՔ

ԴԱՐԲՆՈՑԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

(Der Gang nach dem Eisenhammer)

Ե՛ւ ասուածավախ և՛ անձնանուէր
Մի խոնարհ ծառայ էր Ֆրիդոլին,
Որը գոհ սրտով միշտ կատարում էր
Ինչ որ պատուիրում էր իր տիրուհին։
Սա կոմսուհին էր Սավերն աւանի,
Բնութեամբ քաղցր, սրտով միշտ բարի,
Որը քմահաճ չէր տալ մի պատուէր,
Թէպէտ Ֆրիդոլին այդ ևս կ'անէր։

Առաւօտը վաղ, լոյսն հազիւ բացուած,
Զարթնում էր ծառան, շտապում գործին.
Եւ գիշերային մութը չկոխած՝
Չէր իսկ մտածում իր անձի մասին։
—Հերիք աշխատիս, ասում էր տիկինն,
Այնինչ Ֆրիդոլին արտասունքն աչերին՝
Ցանցաւոր էր դեռ ճանաչում իրան,
Ասես հանգստի չլինէր արժան։

Այդ իսկ պատճառով կոմսուհին ազնիւ
Նրան էր սիրում ծառաների մէջ,
Նրան էր տալիս պարգև ու պատիւ,
Մեղրածոր բերնից գովեստներ անվերջ։

Չէր պահում իբրև մի ծառայ նրան,
Սիրում էր սրտանց իր որդու նման,
Եւ երբ նայում բարեկազմ դէմքին,
Փայլում էր բերկրանքն իր լոյս աչերին։

Բայց ահա Բոբերտ որսորդի կրծքում
Ծնում է թոյնը վառ ատելութեան,
Թէպէտ վաղուց էր նրա սև հոգում
Զարգացել ոգին չարախնդութեան.
Ուստի մի անգամ որսից դառնալիս
Կոմսի հետ ինքն էլ երբ տուն է գալիս,
Իր մոլորական խորհրդովն խսկոյն
Ցանում է կասկած պարոնի սրտում։

—Կոմս իմ, ասում է կեղծաւոր դէմքով,
Երջանիկ էք դուք. չեն խլում իսկի
Կասկածներն իրանց թունոտ ժանիքով
Ո՛չ Ձեր հանգիստը ոչ քունը ոսկի։
Ձեր ազնիւ տիկնոջ ողջախոհ մարմնից,
Իբրև մի գօտի, պատկառանքն անբիծ՝
Անրաժան է միշտ, փորձիչը նրան
Երբեք չի կարող որս անել իրան։—

—Այդ ինչ խօսքեր են, ասում է, ընկեր,
Խոժոռած դէմքով կոմսը որսորդին,
Մի՞թէ պիտ՝ ծփամ ես իբր ալիքներ,

Գասկածով նայիմ իմ կնոջ դէմքին.
Ոչ մի շողոքորթ չի պատրիլ նրան,
Հաստատ է հիմքը իմ վստահութեան.
Փորձիչն, Ատուծով, Սալերնեան կոմսի
Տիկնոջից յաւէտ կը մնայ հեռի։—

—Ի հարկ է, Տէր իմ, ասում է Ռոբերտ,
Եւ անտարակոյս ծաղրի է արժան
Այն ստրկածին յիմարը անպէտ,
Որը լրբաբար մինչ այն աստիճան
Առաջ է գնում, որ իրան սիրող
Տիկնոջը անգամ դառնում է սիրող . . .
—Ի՞նչ, դողում է կոմսն ու հարցնում է,
Այդպիսի մի լիրբ դեռ ապրում էլ է։

—Եւ սակայն այո, ամենքն են գիտում,
Թէև դուք, Տէր իմ, չգիտէք դեռևս.
Բայց արդ քանի որ Դուք էլ էք ճգնում
Ծածկուած պահել, կը ծածկեմ և ես։—
Ձմեռ ասա, տղայ, կամ մեռելը շուտով,
Զայն տուեց կոմսը սառուցիկ զայրոյթով,
Ո՞վ է նայողը իմ ամուսինին . . .
—Տէր իմ, Ձեզ ծանօթ խարտեաշ պատանին։

—Գրաւիչ է նա դէմքովն իր սիրուն,
Զարունակում է նենգութեամբ Ռոբերտ՝

Խիստ գրգռելով պարոնի արիւնն,
Ուղղելով խօսքերն իբրև մի մի նետ։—
Եւ միթէ, Տէր իմ, դուք չէք նկատում,
Թէ ինչ աչքով է նա նրան նայում.
Ձեզ չի էլ լսում, երբ անումէք ճաշ,
Նրան է նայում սրտով հալ ու մաշ։

Տեսէք իր գրած ոտանաւորներն,
Որտեղ իր սիրոյ կայծերն են փայլում,
Որտեղ փոխադարձ ինդրում է նա սէր՝
Վանած իր սրտից պատուի զգացում։
Սակայն կոմսուհին վեհ, ազնուակին՝
Ծածկում է Ձեզնից՝ խղճալով նրան.
Ճիշտն ասած ես էլ ցաւում եմ սրտանց,
Որ յայտնեցի Ձեզ, Տէր իմ վեհապանծ։—

Սաստիկ զայրացած կոմսն այս խօսքերից՝
Իսկոյն մօտակայ անտառն է դիմում,
Որտեղ բարձրաբերձ հնոցի բերնից
Ձուլուող երկաթի բոցն էր շողշողում։
Այստեղ ծառաներն անդուլ անդադար
Վառ էին պահում հուրն յաջողդարար.
Փուքսերը փչում, ժայթքում են կայծեր,
Կարծես ձուլէին ապառաժ ժայռեր։

Կրակն ու ջուրը միացած ոյժով

Իւրաքանչիւրն իր արդիւնքն է տալի.
Ջաղացքի անիւն անխոնջ եռանդով
Դառնում է, դառնում՝ ջրերին դերի.
Գիշեր թէ ցերեկ մուրճերը սալին
Խփում, հանում են շաչիւններ ուժգին,
Այնպէս որ սաստիկ այդ հարուածներից
Երկաթն էլ կակղում, ձևւում է նորից։

Եւ կանչելով կոմսն իր ծառաներից
Երկուսին իր մօտ՝ Տղերք, ասում է,
Առաջին անգամ ով որ իմ կողմից
Այսօր գայ ձեզ մօտ և ձեզ հարցնէ՝
Պատասխան էք դուք տիրոջ հրամանն,
Իսկոյն կրակը ձգեցէք նրան,
Որ անմիջապէս նա մոխիր դառնայ
Եւ էլ աչերիս բնաւ չերևայ։

Բերկրում է զոյգը՝ տմարդ ու վայրագ,
Դահճի վայելուչ բերկրանքով դաժան,
Քանի որ սիրտը այդ կրծքերի տակ
Բիրտ, անզգայ էր երկաթի նման։
Եւ ուրախ զուարթ փչում են փուքսեր,
Սաստկացնում են հնոցի բոցերն,
Եւ արիւնատենչ եռանդով վառուած՝
Սպասում մահուան զոհին գրկաբաց։

Այս դէպքից յետոյ գնում է Բոբերս.
Կեղծաւոր ժպտով ընկերին ասում.
«Հիւտ արա, ը՛նկեր, հիւտ, մի մնալ յետ,
Պարոն կոմսն այժմ քեզ է սպասում».
Իսկ պարոնն ասում է Ֆրիդոլինին.—
Հատալիր դարբնոց և ծառաներին
Հարցրու, արդեօք արել են այնպէս,
Ինչպէս որ իրանց պատուիրել եմ ես։—

Պատրաստ եմ, Տէր իմ, պատասխանում է
Եւ գլուխ տալով մեկնում է ծառան,
Բայց կանգ է առնում, երբ մտածում է,
Թէ տիկինն էլ տար գուցէ մի հրաման։
Եւ կոմսուհու մօտ գնալով իսկոյն՝
Ասում է. Դարբնոց են ինձ ուղարկում.
Թէ ունիք պատուէր, Դուք տուէք նոյնպէս,
Գնամ, կատարեմ. Ձեր ծառան եմ ես։—

Ո՛րդեակ, ասում է, տիկինը նրան
Քաղցրալուր շեշտով, իմ միակ իղձն էր
Լսել պատարագն այսօր սրբազան,
Եթէ որ զաւակս հիւանդ չլինէր։
Դու գնա ուրեմն և ջերմ հաւատով
Աղօթիր իմ տեղն անբիծ շրթներով.
Գնա քաւելու դու քո մեղքերը,
Թերևս ինձ էլ ողորմի Տէրը։

Եւ ուրախառիթ պատուէրն ստացած՝
Մինչ կարծես թռչում էր Քրիդոլին,
Դեռ ևս գիւղի ծայրը չհասած՝
Լսում է նա մի զողանջիւն ուժգին,
Որ զանգակատան գալիս էր բարձրից՝
Բերելով իր հետ եթերի գրկից
Մեղաւորներին ներում և շնորհ
Եւ սուրբ խորհրդի կոչն հանդիսաւոր։

Պէտք չէ Աստծուց խոյս տալ ընաւին,
Երբ ճանապարհին գտնում ես Նրան.—
Ասում, մտնում է տունն աստուածային,
Ուր չկար շարժում, ոչ շշուկ, ոչ ձայն։
Ամառուայ մէջ էր. հունձ էին անում
Ջանասէր մարդիկ ցորենի արտում,
Եւ եկեղեցին՝ զրկուած դպրից՝
Ժամասացութեան չունէր մասնակից։

Եւ վճռողաբար Աստծու յարկին
Դառնում է խոնարհ նա սպասաւոր.
Ասում է. Այս է պահանջում Երկին,
Ուստի և այս էլ կատարենք այսօր։
Եւ քահանային, իբրև լուսաբար,
Տալիս է գօտի և մի փորուրաք,
Եւ պատրաստում է եռանդով բարի՝
Սպասներն ամէն սուրբ պատարագի։

Այս բոլորն երբոր ջանասիրաբար
Կատարում է նա, գնում է փութով
Դէպի սեղանը, դէպի ժամարարն՝
Խորհրդատեսը բռնած զոյգ ձեռքով,
Եւ ծունր է կրկնում մէկ աջ, մէկ ահեակ,
Դիտում երէցի ամէն մին ակնարկ,
Եւ երբ «Սուրբ» «Սուրբ» ի խօսքերն են գալիս,
Ինքն էլ երեք հետ մեծ զանգն է տալիս։

Խաչակնքում է. ու երբ քահանան
Երկիւղած դէմքով դարձած սեղանին՝
Տէր Աստծուն է բերում երևան՝
Վերամբարձ ձեռքով, ինքն այդ վայրկեանին
Փոքրիկ զանգակով զանգահարում է,
Սրբազան խորհուրդն յայտարարում է.
Եւ ծունր են դնում մարդիկ երկիւղած.
Խաչ հանում, կոծում Քրիստոսի դիմաց։

Այսպէս կէտ առ կէտ ահեղ խորհրդին
Առանց սխալի մասնակցում է նա.
Ինչ որ պահանջում էր եկեղեցին,
Բոլորն էլ անգիր գիտէր նա հիմայ.
Եւ չէր էլ յոգնում, մինչև որ երէցն
«Օրհնեալ եղերուք» ասելով օրհնեց,
Դառնալով դէպի իր ժողովուրդը՝
Կնքելով վսեմ և սուրբ խորհուրդը։

Դրանից յետոյ վայելուչ կերպով
Ամէն բան նորից կարգի է դնում,
Մաքրում է սեղանն իր դողդոջ ձեռքով
Եւ իր առաջին ճանապարհն ընկնում.
Խղճմտանքն հանդիստ, զէմքն՝ ուրախ զուարթ
Դէպի դարբնոց է շտապում նա արդ,
Մինչև հասնելը տասներկու «Հայր մեր»
Ասելով լռիկ ինչպէս սովոր էր։

Եւ ծի ահանի ծուխը տեսնելով
Ծառաներին էլ կանգնած կողք կողքի,
Տէրը, ձայնում է նա համեստ կերպով,
Կատարել էք դուք պատուէրը կոմսի։
Ժպտում են նրանք հեգնական ժպտով,
Հնոցի վիհն են ցոյց տալիս մատով
Եւ ասում. Զոհուեց նա այս բոցերին,
Կոմսը թող գովէ իր ծառաներին։

Պատասխանն խոկոյն նա յետ է բերում
Պարոն կոմսի մօտ որ նրան յայտնէ,
Բայց կոմսը կարծես չի էլ հաւատում,
Թէ այդ եկողը Քրիդոլինն է.—
Ա՛յ թշուառական, սրտերից այդպէս,
—Դարբնոցից, Տէր իմ— Ա՜խ, դու ասում ես
Եւ կամ ուշացել ես ճանապարհին։—
Ո՛չ, աղօթքի եմ պարապել, Տէր իմ։

Որովհետև երբ մեկնեցայ Ձեզնից
Ես այս առաւօտ, ինչպէս որ պարտքս էր,
Գնացի հարցնել նոյնպէս տիկնոջից,
Չունէր նա ես արդեօք մի պատուէր.
Իսկ նա պատուիրեց, որ գնամ, Տէր իմ,
Սուրբ պատարագին ներկայ գտնուիմ.
Եւ ես գնացի ու սիրայօժար
Աղօթեցի Ձեր երկուսի համար։—

Այս խօսքի վրայ կոմսը ապշելով
Սարսափը սրտին՝ ասում է. Տղայ,
Դարբնոցից այժմ ինչ պատասխանով
Դարձել ես ինձ մօտ, շուտ արա, ասա։—
Այդ պատասխանը սոսկալի է, Տէր,
Ցոյց էին տալիս ինձ վառուող բոցեր
Եւ ասում. Զոհուեց նա այս բոցերին,
Կոմսը թող գովէ իր ծառաներին։

—Իսկ ուր է Բոլերան, ասում է յանկարծ
Կոմսը զրկելով մի սարսուռ ներքին,
Մերձակայ անտառն է ուղարկուած.
Հաեսմք իրար դուք ճանապարհին։—
Հաեսայ, Տէր իմ, ես ոչ անտառում
Նրանից մի հետք, ոչ դաշտավայրում։
—Լաւ, ասաց կոմսն ու շուտ վրայ բերաւ.
Դատաստանն Աստուած երկնքում տեսաւ։

Եւ բուռն սիրով սիրտը ողողուած՝
Ծառայի թևից բռնում է իսկոյն
Եւ տանում նրան տիկնոջ մօտ յուզուած,
Որ դեռ այդ մասին ոչինչ չէր գիտում.
Ասաց. Հրեշտակն իսկ մաքուր չէ այսքան,
Թող սա Ձեր շնորհին լինի միշտ արժան.
Ինչքան էլ մենք վատ դարան լարեցինք,
Սրա հետ էին Աստուած և երկինք։—

1901

ՀԱԲՍԲՈՒՐԳԻ ԿՈՄՍԸ

(Der Graf von Habsburg)

Ասպետնում կայսերական վեհ փառքով
Ռուդոլֆ արքան մի վաղեմի սրահում,
Իր սուրը օծման շքեղ ոսկի առիթով
Ճաշ էր անում իշխանների շրջանում։
Պալատի կոմսը կերակուրն էր բերում,
Բոհեմացին կարմիր գինին փրփրուն,
Մինչ ընտրողները՝ ընդ ամենը եօթն հոգի՝
Ինչպէս աստղեր՝ արևի շուրջ բոլորուած՝

Իրանց երկրի տիրոջ շուրջն էին շարուած՝
Ամէն մէկը գլուխն անցած իր գործի։

Եւ շորս կողմից պատշգամբում խառն ի խուռ
Ժողովուրդը լցուած էր մեծ բերկրանքով.
Կեցցէներից և ծափերից ընդհանուր՝
Փողերը իսկ հնչում էին խուլ կերպով.
Որովհետև կորստաբեր, ձիգ կռուին,
Գայսերաղուրկ, դարհուրելի օրերին
Վերջ էր դնում արդարասէր սոյն արքան։
Էլ չէր գործիլ երկաթ սուրը կուրարար,
Էլ չէր վախիլ խաղաղակեացն ու տկար՝
Հզօրներին լինել սարուկ անպաշտպան։

Եւ առնելով կայսրը բաժակը ոսկեայ՝
Ձայն է տալիս մեղմ հայեացքով գոհունակ.
«Փայլուն հանդէս, փայլուն նոյնպէս ճաշ ահա
Արքայական սրտիս տալու զմայլանք.
Բայց չեմ տեսնում բերկրանք բերող իմ երգչին,
Որ քաղցր երգով յոյզեր շնչէ իմ կրծքին
Եւ երկնային վեհ պատգամներ կարդայ մեզ։
Մանկութիւնից եմ սովորել ես նրան
Եւ իբր ասպետ՝ միշտ էլ կանգնել եմ պաշտպան.
Արդ, իբրև կայսր հրաժարուելիս այսօր ես»։

Եւ տես, ահա, շորս բոլորը իշխաններ՝
Ներսէ մտնում երգիչն՝ հագին պարեգօտ.

Արծաթի պէս ունի փայլուն նա մազեր,
Դէմքն է ժժգոյն, ինքն՝ ալեւոր տարիքոտ.
Չի հնչեցնում նա քնարն իր ոսկեւար,
Սէր է երգում բղխած սրտից խանդավառ,
Եւ գովում է ինչ որ վեհ է և ազնիւ,
Ինչ որ մարդի տենչում է սիրան ու հոգին,
Եւ հարցնում, ինչ է կայսեր հաճելին,
Որով չքեղ սոյն հանդէսին տար պատիւ։

«Քաւ լիցի ինձ, թէ ես երգչիդ տամ պատուէր,
Ասում է նրան վեհապետը ժպտագին,
Քեզ պատուիրել կարող է լոկ մի այլ Տէր.
Լսիր դու բեզ ոգեւորող վայրկեանին.
Ինչպէս օդում քամիներն են մռնչում,
Մարդ չի գիտում, ուստ են գալիս, ուր չնչում,
Ինչպէս աղբիւրն անծանօթ մութ խորերից,
Այնպէս երգչիդ երգն է ներսից դուրս գալիս,
Եւ այն աղօտ զգացմանց նոր ոյժ տալիս,
Որ մեր սրտում չեն արթնացել դեռ քնից»։

Եւ մինչ ուժգին լարերն հնչում են քնարի,
Երգիչն ահա իր պատմութիւնն է երգում.
«Դաշտ էր ինչել մի կոմս գիւղացիներն արի՝
Արագավազ որսալ քարայծ սարերում։
Քաջ գիւղացիներին հետեւում էր սպասաւորն՝
Ձեռին բռնած որսի զէնքերն հարկաւոր.

Հենց որ հասնում է իր ձիով տիրոջ մօտ,
Լսուում է մի զանգակի ձայն հեռուից.
Մի քահանայ և մի ժամկոչ ետևից՝
Տիրոջ մարմինն էին բերում հետիոտ։

Եւ բացում է կոմսը գլուխն հեղաբար,
Մինչև երկիր խոնարհում է դողալով՝
Իբրև պատիւ այն Էուխարիստն սրբարար.
Որ մարդկային փրկեց ազգն իր արիւնով.
Դաշտի մէջին կարկաչում էր մի վտակ՝
Մէջքն ուռցրած հեղեղատի ալեաց տակ,
Արգելք դառած ուղևորի քայլերին։
Եւ երէցը սուրբ մարմինը փրկչական
Ցած դնելով՝ հանում է կօշիկն ու գուլպան,
Որ անվտանգ իրան ձգէ միւս եզրին։

Ի՞նչ ես անում, կոմսն ասում է, հայր երէց,
Մինչ զարմացած սա դեռ նրան էր նայում.
—Ինձ է սպասում, Տէր, մի հիւանդ մահամերձ,
Որին այժմ ես երկնաւոր հացն եմ տանում.
Եւ քանի որ մօտեցել եմ մի առուի,
Որ յորձանուտ ալիքներով հեղեղի
Ուռել է խիստ և ցայտում է փրփուրներ,
Պարտական եմ բոլոր ոտքով ես հիմայ
Անցնել այն կողմ, որպէսզի զէթ չմնայ
Հիւանդս զուրկ փրկութիւնից երկնաբեր։

Եւ աւասիկ կոմսը տալիս է նրան
Ասպետական ձին և մի սանձ փառաւոր,
Որ շուտ հասնի նա հիւանդին տեսութեան
Եւ անյապաղ կատարէ պարտքն հոգևոր։
Իսկ ինքն ուրախ հեծնելով ձին ծառայի՝
Սլանում է դանել վայելքն իր որսի։
Միւս օրը երախտագէտ բարևով,—
Իր պաշտօնից երէցն արդէն եւ դարձած,—
Ցետ է բերում ձին՝ սանձիցը պինդ բռնած՝
Պատկառանքից աչերը ցած կախելով։

Ասուած չանէ, գոչում է կոմսն հեղաբար,
Որ մի էլ ես որսի տանիմ կամ մարտի
Այն նժոյգին, որ ձեռի տակ քո արդար
Փոխադրեց մարմինը իմ Արարչի։
Քեզ եմ տալիս, իսկ թէ դու այդ չես ուզում,
Նրան Տիրոջ ծառայութեանն եմ նուիրում.
Իբրև մի ձօն Նրան եմ տալիս անտրտունջ,
Որի շնորհիւ աշխարհումս ես իբր աւատ՝
Վայելում եմ պատիւ և գանձ յորդառատ,
Եւ իմ արիւն և իմ հոգի և իմ շունչ։

Թող ուրեմն, գոչեց երէցը արդար,
Թշուառների ձայնին լսողն յաւիտեան՝
Պատուէ քեզ միշտ պատիւներով անդադար,
Ինչպէս, որ դու պատուեցիր այժմ իրան։

Դու, ազնիւ կոմս, Զուիցերեան մեր երկրում
Քաջ ասպետի մեծ հռչակ ես վայելում.
Ծաղկափթիթ ունիս դուստրեր թուով վեց.
Թող նրանցից ամէն մէկը Քո յարկին
Նուէր բերէ մի մի պսակ թանկագին,
Եւ դարերով փայլի Քո տան փառքը մեծ»։

Լռեց ձայնը. խոկումների գիրկն ընկաւ
Կայսրը, հենց որ տեսաւ անցեալն իր դիմաց.
Ծերուկ երգչի աչերի մէջ նայեցաւ,
Ըմբռնեց միտքն՝ այն երգի մէջ թաքնուած։
Տեսաւ իր դէմ նոյն երէցի հեզ պատկերն
Եւ աքողեց արտասուքի կայլակներն
Վերարկուի ծալքերի տակ ծիրանի։
Եւ ամէն մարդ սեռած աչքը կայսրին՝
Օրհնութիւն էր երգում Տիրոջ գործերին,
Որ նա երգչի ներբողած կոմսն էր արի։

1901

ԲԱԽՏ ԵՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

(Das Glück und die Weisheit)

Մի անգամ բախտն իր սիրելուց խռոված՝
Իմաստութեան մօտ թռաւ ու ասաց.
«Արի, իմ բոլոր գանձերը քեզ տամ,
Միայն թէ եղիր դու ինձ բարեկամ։

Ինչքան էլ առատ, սիրուն ընծաներ
Տալիս էի նրան, նա էլի գոհ չէր.
Աւելի էր միշտ, աւելի ուզում
Եւ ինձ էլ դեռ ևս ժլատ անուանում։

Հերիք է, քոյր իմ, թափես դու քրտինք,
Արի, ես և դու բարեկամ լինինք.
Ինչքան որ ունիմ, բաւ է երկուսիս,
Արօրիդ գլխին հերիք է մաշուիս»։

Ծպտեց Սոֆիան, երբ որ այս լսեց,
Ապա քրտինքը սրբելով ասեց.
«Սիրելիդ գնաց իրան սպանի.
Ձուտ, գնա հաշտուիր, ինձ չես պիտանի»։

1901

ԼՈՅՍ ԵՒ ՋԵՐՄՈՒԹՈՒՆ

(Licht und Wärme)

Աղնիւ ես, մարդ, թէ դու աշխարհ ես գալիս
Ե՛ւ հաւատով և՛ զուարթ,
Հաւատալով ինչ որ սնունդ է տալիս
Մատաղ հոգուդ անարատ.
Թէ տեսնում ես քեզանից դուրս շատ բաներ
Եւ ճշմարտին գինուոր գրուում անձնուէր։

Բայց ինչքան փոքր, ինչքան նեղ է և չնչին՝
Աշխարհի մէջ ամէն բան,
Որտեղ ճնշուած հաղիւ դու քո խեղճ անձին
Տէր ես կանգնում և պաշտպան,
Ու վերջապէս սառն, հպարտ և անխռով
Դու քո սիրտը յաւէտ փակում ես սիրով։

Ճշմարտութեան ճառագայթները պայծառ,
Ա՜խ, չեն տալ միշտ բոցէ շող.
Երանի՜ քեզ, թէ գիտութեան դու վճար
Չես տուել սիրտդ այրուող.
Բայց ունեցիր, —և կը լինիս երջանիկ,—
Հանճարի աչք և սիրողի ջերմ սրտիկ։

1900

ԱՂՋԿԱՑ ՈՂԲԸ

(Des Mädchens Klage)

Անտառը հեծում, ամպերը մեկնում,
Նստել է կոյսը դալարի եզրում.
Ալիք փշրուում են ուժգին ուժգին,
Մինչ կոյսն հեծում է գիշերուայ մութին՝
Աղի արտասունքով աչերն ողողած։

Սիրտս մեռած է, դատարկ է աշխարհ,
Ոչ մի իղձ այլ ևս չկայ ինձ համար.
Յետ կանչիր որդուդ ,ով Սուրբ երկնաւոր,
Ես հաշակել եմ վայելքն երկրաւոր,
Ես օր եմ տեսած, սիրած ու սիրուած։

Ի զուր է հոսում արտասունքդ ուղիներով,
Մեռելները չեն զարթնիլ ողբերով.
Բայց թէ կայ մի բան որ սիրտդ սփոփէ,
Երբ այլևս սիրոյդ բերկրանքն անցել է,
Ասա, Երկնայինս այն էլ եմ տալու։

Թող հոսի ի զուր արտասունքդ ուղիներով,
Թող մեռելները չզարթնեն ողբերով.
Այն ինչ որ պէտք է հէգ սիրտդ սփոփէ,

Երբ այլևս սիրոյդ բերկրանքն անցել է,
Վշտերն են սիլու, ողբերն են սիրու։

1904

ԱՌ ԳԱՐՈՒՆ

(An den Frühling)

Բարև, սիրուն պատանի,
Դու բնութեան բերկրութիւն.
Ե՛կ ծաղկունքով գեղանի՝
Կեանք աւետել դաշտերուն։

Ո՜հ, դու նորէն, դու եկար,
Ե՛ւ գեղեցիկ և՛ անդին.
Մեր սրտերը խանդավառ
Կ՚սպասէին քո դարձին։

Կոյս մ՚ունէի, կը յիշես,
Ո՜հ, յիշէիր, սիրելիս.
Այն աննման կոյսս հեղ՝
Սիրեց ու դեռ կ՚սիրէ զիս։

Զատ ծաղիկներ ես քեզմէ
Առեր, տուեր եմ անոր.
Անշուշտ այսօր ալ մեզմէ
Ձեռ խնայեր քո շնորհ։

Բարև, սիրուն պատանի,
Դու բնութեան բերկրութիւն.
Ե՛կ ծաղկունքով գեղանի՝
Կեանք աւետել դաշտերուն։

1899

ԱՌԱՋԻՆ ՀԻՍՔԸ ԿԱՊՈՒԱԾ

ՑԱՆԿ

	Էջ
Իբիկոսի կռունկները	5
Հերո եւ Լէանդր	14
Կասանդրա	28
Դեմեստրէի բողոքը	35
Տոգգէնբուրգի ապպեսը	42
Երկրի բաժանումը	46
Դարբնոցի ճանապարհին	50
Հաբսբուրգի կոմսը	60
Բախտ եւ իմաստութիւն	66
Լոյս եւ ջերմութիւն	67
Աղջկայ ողբը	68
Առ գարուն	69

ԳԻՆՆԷ 20 կոպ.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

Օտար փուլեր, Ֆ. Հիսմ
Հաճքի ճիգեսկիներն ու խառնակիները